IV

ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Մշակույթը, լայն առումով, պատմական զարգացման ընթացքում մարդկային հասարակության ձեռք բերած նվաճումների ամբողջությունն է, ինչպես հոգևոր, այնպես էլ նյութական բնագավառներում։ Նյութական մշակույթ հասկացությունը վերաբերում է այդ նվաճումների նյութական-առարկայական բնագավառին և ժամանակագրորեն նկատի է առնվում նրա պատմությունը նախնադարյան, հին և միջնադարյան դարաշրջաններում։ Նյութական մշակույթի ուսումնասիրությունը կատարվում է գերազանցապես հնագիտական պեղումների միջոցով։

Հայ ժողովուրդը դարերի ընթացքում կերտել է բավականաչափ հարուստ նյութական մշակույթ, որի գիտական ուսումնասիրությունը սկսվել է XIX դարի 70—80-ական թթ., երբ ձեռնարկվեցին ծրագրված հնագիտական պեղումները։

Հին հայկական մշակույթի մի շարք հուշարձաններ հայտնի էին առանց պեղումների, ինչպիսին էին Գառնիի ամրոցի հեթանոսական տաճարի ավերակները, պատահականորեն գտնված առանձին հունարեն արձանագրություններ, Անահիտ աստվածուհուն վերագրվող արձանի բրոնզե գլուխը և մի քանի այլ նյութեր։ Այդուհանդերձ հին հայկական դարաշրջանի մ.թ.ա. III—մ.թ. III դդ. նյութական մշակույթը հիմնականում մնում էր անհայտ և չուսումնասիրված։ Պատճառն այն էր, որ պեղումները մինչև XX դարի 30-ական թթ. կրում էին միակողմանի բնույթ և ընդգրկում էին հնագույն շրջանների հուշարձանները։ Ճիշտ է, Նիկողայոս Մառը խախտեց այդ ավանդույթը, և պեղումներ սկսեց միջնադարյան Անի քաղաքում։

Հնագույն բնակավայրերի և դամբարանների պեղումների շնորհիվ ուսումնասիրվեցին հին և նոր քարի դարը Հայաստանում, քարի և պղնձի դարաշրջանը, վաղ միջին և ուշ բրոնզի ժամանակների մշակույթը, անցումը բրոնզի դարից վաղ երկաթի առաջացմանը։ Ըստ որում Հայաստանը նշանավորվեց որպես մետաղների մշակույթի զարգացման աչքի ընկնող կենտրոններից մեկը։ Արդեն վաղուց սկսվել էր հայ ժողովրդի կազմավորումը և Հայկական լեռնաշխարհում խոսում էին հայերեն։ Մ.թ.ա. IX դարում այնտեղ առաջանում է Ուրարտական պետությունը՝ հայերենից տարբեր, խուռիտականին ազգակից լեզվով, սեպագիր գրությամբ և հինարևելյան՝ միջագետքյան բնույթի մշակույթով։ Ուրարտական պետությունը գոյատևեց մինչև մ.թ.ա. VII դարը։ Նույն այդ դարում վերջնականապես կազմավորվեց հայ ժողովուրդը, որի մեջ լուծվեցին նաև ուրարտացիները։ Մեռավ ուրարտական լեզուն, պատմության գիրկն անցան ուրարտական սեպագիրը, ինքնատիպ ճարտարապետությունը։ Մինչդեռ շարունակեցին առաջադիմել հայոց լեզուն և հայկական մշակույթը և՛ նյութական, և՛ հոգևոր բնագավառներում, պահպանվեցին ուրարտական մշակույթի որոշ տարրերը միայն։

Մ.թ.ա. VI—IV դդ. Հայաստանը գտնվում էր Աքեմենյան Պարսկաստանի քաղաքական իշխանության ներքո, կրելով իրանական մշակույթի նկատելի ազդեցությունը։

Մ.թ.ա. III—I դդ. հայ մշակույթի զարգացման ընթացքը նկատելի բեկում կրեց. եթե մինչ այդ հայ մշակույթը արևելյան բնույթ էր կրում, ապա III—I դդ. նկատելի շրջադարձ կատարեց դեպի արևմտյան հելլենիստական մշակույթը։ Արտաշես I-ի (մ.թ.ա. 189—160), Տիգրան II-ի (մ.թ.ա. 95—55), Արտավազդ II-ի (մ.թ.ա. 55—34) օրոք հայ ժողովուրդը, հաղորդակից դառնալով հունա-հելլենիսական աշխարհին, կրեց նրա հասարակական, քաղաքական, անտեսական և մշակութային ազդեցությունը։ Հայկական մշակույթն ստացավ նկատելիորեն հելլենիստական կերպարանք։ Հայկական արքունիքը, մասամբ և իշխող վերնախավի ներկայացուցիչները սկսեցին օգտագործել հունական լեզուն և գիրը, Տիգրանակերտում կառուցվեց հունական թատրոնի շենք և հրավիրվեցին հույն դերասաններ, Արտաշատ մայրաքաղաքում ներկայացվեց հույն հեղինակ Եվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգությունը։ Տիգրան II-ի արքունիքում հաստատվել էին աթենացի հռետոր Ամփիկրատեսը, Մեսարողորոս Սկեփսիացին, որը գրել է Տիգրանի պատմությունը, Արտավազդ թագավորը գրել է ողբերգություններ, պատմություններ և ճառեր հունարեն լեզվով։

Հելլենիզմը ավելի լայն և ցայտուն արտահայտություններ ունեցավ մանավանդ հայկական նյութական մշակույթի բնագավառում։ Գառնի ամրոցում կատարվող պեղումների ժամանակ հայտնաբերվեց բաղնիք, որը կառուցվածքով և օգտագործման եղանակներով միանգամայն նման էր հունա-հռոմեական բաղնիքներին։ Այն ուներ կրկնակի հատակ և ջեռուցումը կատարվում էր վերին հատակի տակից։ Բաղնիքի չորս բաժանմունքներից երեքը լողասենյակներ էին, բաժանված ջերմ (հնոցի մոտինը), սպա տաք և հով լողարաններ։ Չորրորդ բաժանմունքը հանդերձարանն էր, որը կից էր սառը ջրի ավազանին, որի մեջ մանում էին լողացողները հագնվելուց առաջ։ Հանդերձարանի հատակը հարդարված էր խճանկար պատկերներով՝ ամբողջովին վերցված հունական առասպելաբանությունից. խճանկարը բաղկացած է կենտրոնական և արտաքին շրջանակներից, որոնցից կենտրոնականում քարե գույնզգույն մանրիկ հատիկներով պատկերված են օվկիանոսը՝ պատկառելի ծերուկի և ծովը (Թալասսան)՝ գեղանի կնոջ տեսքով և հունարեն մակագրություններով։ Արտաքին շրջանակում պատկերված են տեսարաններ դարձյալ հունական ծովային առասպելաբանությամբ և համապատասխան մակագրություններով։

Պեղումներով բացվեցին նաև ամրոցի արքայական պալատի երկհարկանի շենքի ավերակները։ Ամրոցի ներսում և նրա մերձակայքում կատարված պեղումներով հայտնաբերվեցին զգալի քանակությամբ մետաղե զենքեր, գործիքներ, գունազարդ խեցեղեն, ապակեղեն (որի արտադրությունը Հայաստանում սկսվել է հելլենիստական ժամանակներում), ինչպես նաև հռոմեական և հելլենիստական իշխողների արծաթյա դրամներ։

Հարկ համարեցինք համեմատաբար մանրամասն կանգ առնել Գառնիի պեղումների մի քանի արդյունքների վրա, քանի որ Գառնիի պեղումներով սկսվեց հայկական հելլենիստական նյութական մշակույթի հայտնաբերումը և ուսումնասիրությունը։

Հետագայում հին հայկական հուշարձանների պեղումները ընդարձակվեցին և լայն ծավալ ստացան։ 1962 թ. սկսվեցին հին Հայաստանի մայրաքաղաք Արմավիրի պեղումները, որտեղ հայտնաբերվեցին թե՛ ուրարտական և թե՛ հին հայկական հնագիտական հուշարձանների ավերակներ և հնագիտական նյութեր։

Բացառիկ արդյունքներով պսակվեցին հին Հայաստանի հռչակավոր մայրաքաղաք Արտաշատի պեղումները, որոնք ձեռնարկվեցին 1970 թ.։

Արտաշատը հիմնադրվել է մ.թ.ա. 180—170-ական թթ.՝ իբրև հայոց մայրաքաղաք։ Գտնվելով Արարատյան արգավանդ դաշտում, առևտրական ճանապարհների հանգույցում, կարճ ժամանակամիջոցում քաղաքը հասավ տնտեսական և մշակութային նշանակալից զարգացման, ձեռք բերելով լայն

ճանաչում հին աշխարհի երկրներում։ Հույն պատմիչ Պլուտարքոսը, խոսելով Արտաշատի հիմնադրման մասին, գրում է. «Այսպիսով կառուցվեց մեծ ու խիստ գեղեցիկ քաղաք, որը կոչվեց Թագավորի անունով և հռչակվեց Հայաստանի մայրաքաղաք»[1]։

Գտնվելով Արտքս գետի և Մեծամորի (որը հնում հոսում էր քաղաքի կողքով) միջև, մայրաքաղաքը պաշտպանված էր ջրային հզոր պատնեշով, ինչպես և պարսպի ընդարձակ համակարգով։ Արտաշատի միջնաբերդը տեղադրված էր խիստ իրար կից յոթ բլուրների վրա, շրջափակված պարիսպներով, որոնք միանալով կազմում էին մի միասնական հզոր ամբողջություն։

1971 թ. պեղումները կատարվում էին հյուսիս-արևելյան բլրի վրա, որն ունեցել է պաշտպանական նշանակություն, ուստի այստեղ բացվեցին դարբին-զինագործի մի քանի արհեստանոց, քարնետ մեքենայի քարե «ռումբերի» կույտ։ Արհեստանոցներից մեկում գտնվեցին Տիգրան II-ի արծաթե դրամներ, թվով 28 դրամ, իսկ սենյակներից մեկում հայտնաբերվեց Աֆրոդիտե աստվածուհու մարմարե հոյակապ արձանը, որը պատկանում է մ.թ.ա. II դարի վերջերին—I դարի սկզբներին։ Գտնվեցին նաև զգալի քանակությամբ հնագիտական առարկաներ պատրաստված մետաղներից, քարից, կավից, ապակուց և ոսկորից։ Բոլորն էլ առաջին դարերի տեղական հելլենիստական մշակույթի նմուշներ։

Ավարտելով պեղումները առաջին բլրի վրա, արշավախումբը աշխատանքը տեղափոխեց քաղաքի հարավ-արևմտյան մասում, անմիջապես Արաքսի դիմաց գտնվող թաղամասը։ Այստեղ բացվեցին միմյանց զուգահեռ ընթացող չորս փողոցի հիմքերը, նրանց վրա կառուցված բազմաթիվ շենքերի հիմնապատերով, կղմինդր և ջրմուղի կավե փողրակներ արտադրող արհեստանոցներով։ Կավագործ խեցեգործների այս թաղամասում բացվեցին երկու բաղնիքների ավերակները՝ առաջին և չորրորդ փողոցների վրա, իրարից 30 մ հեռավորությամբ։ Արտաշատում բացված բաղնիքները նույնպես ունեն կրկնակի հատակ և ջեռուցվել են վերին հատակի տակից։

Արտաշատի պեղումներն այստեղ բացված անտիկ խեցեղենի արտադրության արհեստանոցներով և հունա-հռոմեական բնույթի բաղնիքներով, մի թաղամասում իրար զուգահեռ չորս փողոցների առկայությամբ, ջրամատակարարման համակարգով և այլ հատկանիշներով, հիշեցնում են հելլենիստական քաղաքաշինության, իսկ տեղանքին՝ բլուրներին և հարթավայրին հարմարվելու հատկանիշներով կրկնում են տեղական քաղաքաշինության սկզբունքները. այսպիսով դրսևորվում է այդ երկու սկզբունքների համադրությունը։

Գառնիի և մանավանդ Արտաշատի պեղումների շնորհիվ հայտնաբերվել են մեծ քանակությամբ և բազմազան հնագիտական նյութեր, մասամբ ներմուծված, բայց առավելապես տեղական արտադրության, որոնք սակայն ունեն հելլենիստական բնույթ։ Դրա հետ միասին, ինչպես Գառնիում, այնպես էլ Արտաշատում երևան են եկել նաև հայկական ավանդական բնույթի նյութեր, մանավանդ երկաթե զենքեր և գործիքներ, ինչպես և կավագործական արտադրանք, շինարարական աղյուսներ, խոհանոցային խեցեղեն սպասք։

---

[1] Plut., Lucullus, XXXI, 5.

Այդուհանդերձ տիրապետողը հելլենիստական բնույթի առարկաներն էին։ Այսպիսով, հին Հայաստանի նյութական մշակույթի զարգացումը Հայաստանում սկսած մ.թ.ա. II դարից մինչև մ.թ. III դարը կրել է ղերաղանցապես հելլենիստական բնույթ։

Դա իհարկե պատահական չէր, քանի որ նյութական մշակույթն առավելապես կապված էր արհեստավորական արտադրության, ինչպես և բնակչության առօրյա պահանջների սպասարկման հետ և դյուրությամբ կրեց հունա-հռոմեական, փոքրասիական, սիրիական երկրներում զարգացող առաջավոր արտադրության և մշակույթի ազդեցությունը, յուրացնելով նրանց արտադրական տեխնիկական փորձն ու հմտությունները արհեստագործության տարբեր բնագավառներում։ Տեղում առաջացան արտադրության նոր բնագավառներ, ինչպես՝ ապակեգործությունը, կղմինդրի, ջրմուղի խողովակների, ֆայանսի արտադրությունը, նորատիպ խճանկարը, որոնք մինչ այդ բացակայում էին։ Զգալի նշանակություն ունեցան նաև վաղուց Հայաստանում կիրառվող արհեստների տեխնիկական նվաճումները։ Նյութական մշակույթի զարգացումն առհասարակ հասավ մի նոր, ավելի բարձր աստիճանի։ Հելլենիզմն իր դրական ազդեցությունն ունեցավ նաև ճարտարապետության և արվեստի բնագավառներում։

Հելլենիստական բնույթի մշակույթը գերազանցապես քաղաքային բնակչության և հասարակության բարձր խավերի մշակույթն էր, բայց այն արդեն բավականաչափ լայն տարածում էր ստացել ոչ միայն քաղաքներում, Արարատյան դաշտում, այլև երկրի հեռավոր շրջանների ամրոցներում և քաղաքատիպ ավաններում, անգամ նրանց մերձակայքում, գյուղական բնակավայրերում, որը պարզորոշ երևան է գալիս տարբեր տեղերում կատարվող հնագիտական պեղումների շնորհիվ։ Հելլենիստական մշակույթի առաջադիմական նշանակությունը, մանավանդ նյութական մշակույթի առաջադիմության բնագավառում, ակնհայտ է և առարկություն չի վերցնում։

Վերևում նշվեց նաև հելլենիստական բնույթի հոգևոր մշակույթի առանձին երևույթների առաջացման մասին, սակայն հարկ է ասել, որ դա ավելի սահմանափակ նշանակություն ունեցավ։ Հայ հոգևոր մշակույթի ավանդները ժողովրդի գիտակցության և հոգեբանության մեջ խոր արմատներ էին ձգել և դյուրությամբ փոփոխվել չէին կարող։ Այդպիսին էին հայրենի երկրի բնությանը վերաբերող ավանդական զրույցները՝ Հայկին և Բելին, Արա Գեղեցիկին և Շամիրամին, Տորք Անդեղին, հայոց թագավորներին՝ Երվանդին, Արտաշեսին և Սաթենիկին և այլոց նվիրված պատումների շարերից սկսած մինչև Գողթան երգերը, Վահագնի ծննդին վերաբերող սքանչելի ներբողը։ Ճիշտ է, հին հայկական պանթեոնի աստվածներին հելլենիստական անուններ տրվեցին, բայց դա զուտ ձևական, անվանական բնույթ էր կրում և ըստ էության համարյա ոչինչ չփոխեց։

Հելլենիստական մշակույթի զարգացումը Հայաստանում տևեց շուրջ վեց դար՝ մ.թ.ա. III դարից մինչև մ.թ. III դարը և նշանավորվեց մի մեծ շրջադարձով։ Եթե մինչ այդ հայկական մշակույթի զարգացումը տեղի էր ունենում հիմնականում արևելյան քաղաքակրթության ոլորտում, ապա հելլենիստական դարաշրջանում նրա զարգացումն ընթանում էր առավելապես միջերկրածովյան ավազանի երկրների հունա-հռոմեական հելլենիստական քաղաքակրթության ոլորտում, իր առավել ցայտուն արտահայտություններն

ունենալով մանավանդ նյութական մշակույթի բնագավառում։ Ճիշտ է, հայ մշակույթի զարգացումը երբեմն զուգորդվում էր արևելյան մշակույթին բնորոշ երևույթների հետ, մանավանդ երբ Հայաստանը գտնվում էր արևելյան նվաճողների տիրապետության ներքո։ Բայց շրջադարձն արդեն կատարված էր և նյութական մշակույթը Հայաստանում հիմնականում ազգային կերպարանք ստացավ։ Այդուհանդերձ հայ մշակույթը հետագայում ևս շարունակեց զարգանալ առավելապես արևմտյան մշակույթի ոլորտում։ Հայ հոգևոր մշակույթը մինչ այդ մասամբ աղերսվել էր հունահելլենիստական մշակույթին, իսկ քրիստոնեությունն ընդունելուց և հայ գրերի գյուտից հետո ավելի ևս հաղորդակից դարձավ և մերձեցավ միջերկրածովյան, այժմ արդեն քրիստոնեական մշակույթին, որը դեռևս նկատելիորեն հետևում էր հին աշխարհում զարգացող գիտությանը և գրականությանը, իր կապերը չկտրելով հելլենիստական դարաշրջանում զարգացած մշակույթից։ Դա իր արտահայտությունն է գտել նաև V դարի մի քանի հայ հեղինակների գործերում, իսկ Դավիթ Անհաղթը տիպիկ հելլենիստական փիլիսոփա էր, մասամբ քրիստոնեական երանգավորմամբ։ Հայաստանում առաջացավ մի ամբողջական ուղղություն՝ հունաբան դպրոցը։ Այլ խոսքով, շրջադարձը դեպի արևմտյան քաղաքակրթությունը հայ մշակույթի մեջ ևս կրեց անդառնալի մշտատև բնույթ, իսկ նրա հիմքում ընկած էր հին Հայաստանի հելլենիստական մշակույթը, որի համակարգում առավել նշանակալից և որոշիչ դեր էր կատարում հայկական հելլենիստական նյութական մշակույթը։

ФОРМИРОВАНИЕ ЭЛЛИНИСТИЧЕСКОГО НАПРАВЛЕНИЯ В ДРЕВНЕАРМЯНСКОЙ КУЛЬТУРЕ

Академик НАН РА Б. Н. АРАКЕЛЯН

Резюме

В эпоху бронзы культура Армении и соседних стран развивалась в едином русле, и поэтому различия были не особенно значительны. В существовавшем в IX—VII вв. до н. э. на Армянском нагорье государстве Урарту наряду с армянами проживали также урарты, родственные с хурритами. Они пользовались клинообразным письмом, перенятым из Месопотамии. Их культура и искусство носили явно месопотамские черты. Язык урартов резко отличался от армянского. Урарты создали довольно мощное государство, сильную армию, значительную культуру, но будучи малочисленной этнической единицей, рассыпавшейся на обширных территориях Армянского нагорья среди большинства армянского населения, не смогли сформировать единую народность. Во времена существования государства Урарту этническое образование армянского народа вступало в свою завершающую фазу, и урарты слились с формирующимся армянским народом. Факт, что после падения Урарту, урарты перестали существовать как этническая группа, тем более как народность, их язык и письменность были забыты. В VI—IV вв. Армения находилась под господством Ахеменидского Ирана и армянская культура претерпела известное влияние иранской

культуры. После развала державы Ахеменидов, в Армении образовалось свое государство, которое при Тигране II Великом стало одним из наиболее мощных государств Ближнего Востока. Армянское государство теснейшим образом было связано с эллинистическим миром и было признано как местное эллинистическое государство. В политическом строе и культурном развитии был совершен решительный переход от Востока к Западу. Проведенными в Гарни, Арташате многолетними систематическими раскопками были открыты архитектурные памятники, бани античного типа, мозаичный пол с богатым античным сюжетом, масса археологических предметов античного образца; в Армении применялось греческое письмо, цари чеканили монеты эллинистического типа и с греческими легендами. В армянской культуре наряду с местным традиционным направлением возникло и эллинистическое направление, которое в материальной культуре получило преобладание и развивалось в течение нескольких столетий.